ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 31-Ի N 35-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Իրավական ակտի անհրաժեշտությունը

«Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի ավագանու 2013 թվականի հուլիսի 31-ի N 35-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» համայնքի ավագանու որոշման նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում 2019 թվականի սեպտեմբերի 10-ին կատարված փոփոխություններով ու լրացումներով (համարը՝ ՀՕ-165-Ն):

2. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները.

Ջերմուկ համայնքում կատարվող աղբահանության ու սանիտարական մաքրման աշխատանքները իրականացվում են օրենսդրական պահանջներին համապատասխան: Համայնքի ավագանու կողմից 2013 թվականի հուլիսի 31-ի N 35-Ն որոշմամբ սահմանվել են աղբահանության վճարի դրույքաչափեր, ոլորտի հետ կապված մնացած գործառույթները, որպես նորմեր, սահմանվել են հիշյալ որոշմամբ հաստատված կարգում: Օրենքի մեջ ընթացիկ կատարվել են փոփոխություններ (21.12.2017՝ ՀՕ-289-Ն, 22.05.2018՝ ՀՕ-330-Ն, 10.09.2019,ՀՕ-165-Ն), որոնցից բխող փոփոխությունները կատարել է նաև համայնքի ավագանին՝ 2013 թվականի հուլիսի 31-ի N 35-Նորոշման մեջ: Որոշման ներկայացվող նախագիծը արտացոլում է «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում 2019 թվականի սեպտեմբերի 10-ին կատարված փոփոխություններն ու լրացումները: Դրանք վերաբերում են աղբահանության վճար վճարող՝ ոչ բնակելի նպատակային նշանակության շենքերի և (կամ) շինությունների սեփականատերերին (օգտագործողներին): Օրենքում կատարված փոփոխությունները միտված են նվազագույնին հասցնելուն պայմանագրային կողմերի միջև ծագող տարակարծությունները, օրենքի դրույթների տարընմբռնումները: Անհրաժեշտաբար հիշյալ փոփոխություններն ու լրացումները պետք է կատարվեն նաև ավագանու կողմից հաստատված կարգում:

3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը.

«Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի ավագանու 2013 թվականի հուլիսի 31-ի N 35-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» համայնքի ավագանու որոշման նախագիծը ընդունելու արդյունքում ակնկալվում է ապահովել համայնքի բյուջեի եկամուտների այն մասը, որը ձևավորվում է աղբահանության և սանիտարական մաքրման հետ կապված հարաբերությունների համատեքստում՝ օրենքով սահմանված գործողությունների դիմաց համայնքի բյուջե վճարվող պարտադիր գանձույթներից՝ աղբահանության վճարներից: Միաժամանակ, գնահատելի արդյունք կլինի տնտեսվարող սուբյեկտների հետ պայմանագրային պարտավորությունների ավելի հստակ

ձևակերպումը, ավելի որոշակի իրավահարաբերությունների հաստատումը: Հնարավոր կլինի ըստ իրավիճակի հստակ սահմանել աղբահանության վճար վճարողների պարտավորությունները:

4. Իրավական ակտի նորմատիվ բնույթի հիմնավորվածությունը

Քանի որ աղբահանության վճարը համայնքի բնակիչների և համայնքում գործող իրավաբանական անձանց կողմից աղբահանության դիմաց օրենքով և սահմանված կարգով և սահմանված դրույքաչափերի սահմաններում համայնքի ավագանու կողմից սահմանված չափով համայնքի բյուջե կամ արտաբյուջե գանձվող պարտադիր գանձույթ է, հետևաբար տեղական ավագանու տվյալ որոշման նախագիծը կրում է նորմատիվ բնույթ՝ պարունակելով վարքագծի պարտադիր կանոններ համայնքի վարչական տարածքում անորոշ թվով անձանց համար և ուղղված է կարգավորելու աղբահանության վճարների սահմանման և գանձման հետ կապված հարաբերությունները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 31-Ի N 35-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի ավագանու 2013 թվականի հուլիսի 31-ի N 35-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» համայնքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտեր ընդունելու անհրաժեշտություն չկա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 31-Ի N 35-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի ավագանու 2013 թվականի հուլիսի 31-ի N 35-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» համայնքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Ջերմուկ համայնքի բյուջեում եկամուտների և ծախսերի էական ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**